ՀՈԳԵՇՆՈՐՀ Տ. ԱՇՈՏ ԱԲԵՂԱ ՄՆԱՑԱԿԱՆՑԱՆԻ ԱՆԴՐԱՆԻԿ ՔԱՐՈԶԸ Ս. ՀՌԻՓՍԻՄԵ ՏԱՃԱՐՈՒՄ

Սիրելի հավատացյալ ժողովուրդ,

Դժվար է ինձ համար խոսքերով արտահայտել այն հոգեվիճակը, որն ապրում եմ այժմ որպես նորընծա քահանա՝ Աստծու Սուրբ Սեղանի առաջ, և որի համար փառք եմ տալիս Ամենակալ Աստծուն, որ արժանացրեց ինձ քահանայական այս կոչմանը և դարձրեց նաև իր եկեղեցու սպասավորը՝ մասնակից դարձնելով առաքյալների սրբազան առաքելությանը: Աղոթում եմ առ Աստված երջանկահիշատակ Վազգեն Ա Կաթողիկոսի հոգու հանգստյան համար, որի կաթողիկոսության ժամանակ ընդունվեցի Հոգևոր Ճեմարան և իմ առաջին քայլերն արեցի դեպի հոգևոր ասպարեզ:

Իմ սրտի երախտագիտությունն ու շնորհակալությունն եմ ցանկանում հայտնել նաև Ազգիս Հայրապետ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Ա Կաթողիկոսին, որի հայրական խորհուրդներով գոտեպնդվեցինք և մեր ուսերին վերցրեցինք այս ծանր, սակայն քաղցր լուծը: Շնորհակալություն եմ հայտնում Հոգևոր Ճեմարանի տեսչությանը, որ մեր հոգիները որպես կավ թրծեցին ճեմարանական հնոցի մեջ և կապեցին մեր կյանքը հոգևոր ասպարեզին: Չեմ կարող չհիշել նաև իմ միաբանակից հոգևոր եղբայրներին և այն անձանց, որոնք իրենց խորհուրդներով աջակից են եղել ինձ դժվարությունների ժամանակ և օգնել են հավատքիս ամրացման ու ճշմարտությունը ճանաչելու գործում: Հատկապես երախտապարտ եմ գերաշնորհ Տ. Շահե սրբազանին, որ սիրով հանձն առավ հոգևոր ծնողի պարտականությունը և քահանայական օծմամբ կյանքի մի նոր ուղի բացեց ինձ համար:

«Ցանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ»:

«Քրիստոս Աստուած մեր, շնորհեա մեզ ընդ Պետրոսի և ընդ որդւոցն Զեբեդեայ, արժանաւորիլ Քում աստուածային տեսլեանդ»:

Սիրելի քարեպաշտ ժողովուրդ,

Այսօր Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու ամենանվիրական տոներից մեկն է: Այսօր մեր Եկեղեցին ժողովրդին հաղորդակից է դարձնում Հիսուս Քրիստոսի Այլակերպության, Պայծառակերպության սքանչելի խորհրդին, որը մեզ բոլորիս հայտնի է նաև Վարդավառ ժողովրդական անունով: Եվ շարականագրի այս խոսքերը ոչ միայն թախանձագին խնդրանք են, որով նա խնդրում է Աստծուն մեզ նույնպես արժանացնել այն շնորհին, որ տրվեց առաքյալներից երեքին՝ տեսնելու Տիրոջ աստվածային տեսքը, այլ նաև հուշում է մեզ անցնելու այն ուղով, որով երբեմն անցել են Պետրոսն ու Զեբեդեոսի որդիները:

Ավետարանիչը ներկայացնելով Պայծառակերպությունը՝ պատմում է, թե ինչպես Քրիստոս վերցնելով իր աշակերտներից Պետրոսին, Հակոբոսին ու Հովհաննեսին, բարձրացավ մի բարձր սարի գագաթ և սկսեց նրանց աչքի առաջ պայծառակերպվել. Նրա դեմքը արեգակի պես փայլեց, իսկ հագուստը սպիտակ էր ինչպես ձյունը: Նրա ամբողջ մարմինը մի այնպիսի շլացնող լուսով էր փայլում, որ ավետարանիչները այս երկնային լույսը կարողացան միայն արեգակի լույսի և փայլի նմանեցնել: Նրանք տեսան նաև երկու մարդկանց, որոնցից մեկը Մովսես էր, իսկ մյուսը Եղիան: Երբ այդ տեսարանը անցնելու վրա էր, Պետրոսը այս տեսարանից զարմացած, վախեցած ու ապշած՝ չիմանալով, թե ինչ ասի, բայց կամենալով նրանց ներկայությունը երկարատևել բացականչեց. **«Բաբի՛, լավ է, որ մենք այստեղ լինենք և երեք տաղավարներ շինենք, մեկը՝ քեզ, մեկը՝ Մովսեսին, մեկն էլ՝ Եղիայի համար»:**

Սակայն Պետրոսի խոսքերին Քրիստոս չպատասխանեց և երբ Պետրոսը դեռևս խոսում էր, այդ միջոցին մի ամպ եկավ և հովանի եղավ նրանց, իսկ երկնքից լսվեց մի ձայն, որը հոչակում էր. **«Դա՝ է իմ սիրելի որդին, դրա՛ն լսեցեք»:** Աշակերտները վախից երեսի վրա ընկան գետին, իսկ երբ ուշքի եկան և չորս կողմը նայեցին, տեսան, որ ամեն ինչ վերջացել էր: Չտեսան ո՛չ Հիսուսի փայլող դեմքը և ո՛չ էլ աչք շլացնող հագուստը: Նրանց առաջ կանգնած էր միայն երկրային Հիսուս:

Սիրելիներ, պայծառակերպության այս սքանչելի խորհուրդը, իր էությամբ, Աստծու հայտնությունն է: Նրա՝ փառքով հայտնվելը պատասխանն էր աշակերտների այն թերահավատությանը և վախին, թե չարչարվելուց և խաչելությունից հետո այլևս չէին տեսնելու իրենց սիրելի ուսուցչին, չէին լինելու Նրա հետ և իրենց միջև եղած հարազատ մտերմությունը իր վերջն էր գտնելու մահվամբ: Սակայն Հիսուսի նպատակն էր մեռնել աշխարհի փրկության համար և ապա այդ մեծագույն փառքով՝ Միածնի փառքով Իր աշակերտներին երևալով սրտապնդեր նրանց, հավատքի մեջ հաստատեր, որպեսզի առանց երկմտելու Նրա զարհուրելի տանջանքները և խաչի վրա անճառելի անարգանքը կարողանային տեսնել և աներկյուղ քարոզել Ավետարանը:

Նա ցույց տվեց Իր հետևորդներին, որ փառքի ճանապարհը չարչարանքի ճանապարհն է, ցույց տվեց, որ Իր հետևորդները ևս պետք է ընտրեն այդ նույն ճանապարհը՝ Իր որդեգրած ուղին, որովհետև անձնազոհության մեջ է կայանում ճշմարիտ կյանքի նպատակը, այլապես **«Ի՞նչ օգուտ կունենա մարդ, եթե այս ամբողջ աշխարհը շահի, բայց իր անձը կորցնի, – ասում է Տերը, – կամ՝ մարդ իր անձի համար ի՞նչ փրկանք պիտի տա»:** Եվ անցնելով այդ տառապանքի միջով, նրանք դառնում են Քրիստոսի հոչակած այն սրտով մաքուրները, որոնք պիտի ժառանգեն երկնքի արքայությունը և տեսնեն Աստծուն:

Ժամանակը հասել էր, որ Նա հայտնվեր ժողովրդին և որպես աշխարհի փրկիչ, որպես Աստծու Որդի և Աստված հեթանոս ժողովրդի առաջ Աստծու արքայությունը հաստատեր երկրի վրա, փրկության և երանավետ կյանքի ճանապարհներ բացեր: Իսկ Պայծառակերպված Հիսուսին տեսնելով թեև Պետրոսը ցանկանում էր երկար մնալ այդտեղ, սակայն պահանջվում էր

Պայծառակերպության լուսավոր բարձունքից իջնել վար, ելնել Գողգոթա և մարտիրոսական փշե պսակ կրել, ապա երկինք վերանալ ու փառքի պսակ առնել: Այդ է վկայում նաև երկնքից լսվող ձայնը՝ աստվածային մի կոչ, որը հրավիրում էր աշակերտներին հետևելու իրենց վարդապետին, ընթանալու Նրա փշոտ ճանապարհով, խաչերը ուսերին գողգոթա ելնելու, որովհետև այդ է հավիտենական փառքի ճանապարհը: Եվ եթե յուրաքանչյուր ոք գիտակցորեն հանձն առնի իր խաչը կրելու ծանր, սակայն քաղցր պարտականությունը և Քրիստոսին խոստովանի որպես Աստծու Որդի և կատարյալ Աստված, ապա այդ ժամանակ Պայծառակերպությանը հաղորդակից կդառնա ոչ միայն փոխանցված խոսքերով կամ պատմությամբ, այլև կզգա այն իր հոգում, իսկ երկնքից վկայած ձայնը՝ որպես կենդանի վկայություն կարձագանքի նրա սրտում: Այլապես Քրիստոսի Պայծառակերպությունը կդադարի աստվածային հայտնություն լինելուց, եթե մենք անձնապես չապրենք Աստծու հետ ունեցած հոգևոր այն հանդիպման պահը, որ յուրաքանչյուր քրիստոնյայի սրտի փափագն է: Նույնն է սպասվում նաև մեզ բոլորիս, եթե առանց երկմտության վստահաբար քայլենք Տիրոջ պատվիրած ուղիով, ապա Պետրոսի և Զեբեդյան որդիների նման արժանի կլինենք Տիրոջ աստվածային տեսքին և հայրական ձայնին: Եվ Թաբոր լեռան փոխարեն որպես բարձունք ունենալով մեր Մայր եկեղեցին, եթե քայլենք դեպի նա, ապա եկեղեցին որպես տաղավար հովանի կլինի մեզ և նրա հովանու ներքո գտնվողներս որպես աղոթքի, հոգու կանչի պատասխան կլսենք ոչ միայն Աստծու ձայնը, այլ նաև Պետրոսի պես երանությամբ կասենք. «Ե՛ր, լավ է, որ մենք այստեղ լինենք»:

«Շնորհ, սէր և խաղաղութիւն եղիցին ընդ ձեզ և ընդ ամենեսեանդ». ԱՄԵՆ: